

Թափոնների տեսակավորում և տուրքեր



Յուրաքանչյուր քաղաքապետարանը կազմակերպում է աղբի հավաքում և տեսակավորում: Այս ծառայության ֆինանսավորումը ներառում է քաղաքային հարկ¹ (աղբ), որը տատանվում է մի քաղաքից մյուսը: Օրինակ՝ Լիեժում, գումարը կազմում է 100€/տարեկան մեկ անձի և 155€/տարեկան ընտանիքի համար: Ուշադրություն, այս տուրքը ենթակա է վճարման տարվա հունվարի 1-ին. տեղափոխման դեպքում, նախկին բնակության վայրի քաղաքապետարանին վճարած գումարը մնում է ուժի մեջ:

Յուրաքանչյուր տնային տնտեսությունից պահանջվում է տեսակավորել թափոնները ըստ քաղաքապետարանի տված հրահանգների: Թափոնների տեսակավորումը պարտադիր է: Դրա անտեսումը կարող է հանգեցնել տույժի:

Հիմնականում, տեսակավորումը կազմակերպվում է հետևյալ կերպ

Գունավոր պարկը կամ պաշտպանիչ սարքով աղբարկղերը նախատեսված են կենցաղային աղբի համար: Այն վերամշակման ենթակա չէ: Այդ պարկերը հավաքվում են ամեն շաբաթ, ըստ գրաֆիկի՝ տրամադրված քաղաքապետարանի կողմից:



¹ Ցածր եկամուտների դեպքում կարող էք ներկայացվել տուրքի վճարելուց ազատվելու դիմում

Թափոնների տեսակավորում և տուրքեր



Մեկ այլ գույնի պարկ նախատեսված է PMC-ին (պոլիէթիլեն, մետաղներ, ըմպելիքների տուփեր). այնտեղ հարկավոր է գցել պոլիէթիլենային փաթեթավորումներ և շշեր, պահածոների տուփեր, կոսմետիկայի և սննդամթերքի աերոզոլներ, փոքր մետաղյա շշեր, ըմպելիքների տուփեր... Ուրիշ ոչին պետք չի գցել այդ պարկի մեջ, հակառակ դեպքում կենթարկվեք պատժի: Պարկերը հավաքվում են պարբերաբար, ըստ ժամանակացույցի՝ տրամադրված քաղաքապետարանի կողմից:



Ուշադրություն, սրվակները, սննդամթերքի թեթև տարաները, պոլիէթիլենային տոպրակները, սննդամթերքի համար նախատեսված թաղանթները, այլումինե փայլաթիթեղը և ֆրիգուլիտները PMC-ներ չեն: Կասկածի դեպքում հիմնվում եմ PMC պարկի վրա տպված նկարների և բացատրությունների վրա:



Թղթերը և ստվարաթղթերը պետք է պահվեն առանձին: Նրանք փաթեթավորվում կամ հավաքվում են ստվարաթղթե մի տուփում: Թղթերը նույնպես հավաքվում են ըստ ժամանակացույցի՝ տրամադրված քաղաքապետարանի կողմից:



Թափոնների տեսակավորում և տուրքեր



Մեծածավալ իրերը չի կարելի նետել է աղբի մեջ: Հատուկ հավաքում նախատեսված է ամփսը մեկ անգամ, կամ խնդրանքով, զանգահարելով քաղաքապետարանի կողմից տեղեկացված հեռախոսահամարով՝ մեծ իրեր, մետաղյա առարկաներ, կահույք, ներքնակ ... Դրանք կարելի է հանել փողոց միայն հավաքելու օրը:



Ռիշադրություն, էլեկտրատնտեսական սարքերը, հեռուստացույցը, Hi-Fi, video, շինարարական աղբը չեն թույլատրվում, դրանք պետք է տանել բեռնարկղերի հրապարակ:

Ապակյա տարաները պետք է թափել դրանց համար նախատեսված գնդերի մեջ, որոնք տեղադրված են հասարակական վայրերում. բանկաները, շշերը և ապակյա սրվակները դատարկ և մաքուր վիճակում նետվում են այդ գնդերի մեջ: Դրանք հարկավոր է տեսակավորել՝ սպիտակ տարաները առանձին, գունավորը առանձին: Որոշ քաղաքներում դրանք տանից են հավաքվում:



Թափոնների տեսակավորում և տուրքեր



Որոշ համայնքներում, քաղաքային հարկը վճարելուց հետո, ստանում եմ կտրոններ՝ աղբի համար նախատեսված պարկերի դեմ փոխանակելու համար: Այդ պարկերի վերջանալու դեպքում, կարող եմ դրանցից գնել խանութից:

Որոշ համայնքներում գործում է պաշտպանիչ սարքով աղբարկղերի համակարգը: Քաղաքային հարկի վճարումը ինձ թույլ է տալիս աղբի անվճար հավաքման որոշակի քանակ: Թույլատրված նորման գերազանցելու ժամանակ հավելավճարը ես պետք է մուծեմ:

Այլ միջոցներ էլ գոյություն ունեն աղբի քանակը սահմանափակելու համար: Նպատակը՝ քաղաքացիներին հրահրելն է հնարավորին չափ քիչ թափոն ստեղծել: